ПОЛИМЕТАЛЛ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

«ԿԱՊԱՆԻ ԼԵՌՆԱՀԱՐՍՏԱՑՄԱՆ ԿՈՄԲԻՆԱՏ»

փակ բաժնետիրական ընկերություն

(«Կապանի ԼՀԿ» ՓԲԸ)

2017թ.հունվարի 25-ի դրությամբ

Կապանի ԼՀԿ-ի մասին

Կապանի լեռնահարստացման կոմբինատը ձեռք է բերվել «Պոլիմետալի» կողմից 2016թ. և առաջին գործող ակտիվն է ընկերության հայաստանյան ակտիվների փաթեթում:

Կապանի ԼՀԿ-ն ներառում է տարեկան 400 հազ. տոննա արտադրողականությամբ ամբողջովին մեխանիզացված ստորգետնյա հանքը, տարեկան 750 հազ. տոննա արտադրողականությամբ ավանդական ֆլոտացիոն հարստացուցիչ ֆաբրիկան և ենթակառուցվածքային օբյեկտներ:

Ձեռնարկությունն արտադրում է ոսկու-պղնձի-արծաթի և ցինկի խտանյութեր:

«Պոլիմետալի» ռազմավարությանը համապատասխան՝ Կապանի ԼՀԿ հենքի վրա կստեղծվի այլ հանքավայրերից, մասնավորապես՝ ընկերությանը պատկանող Լիճքվազի հանքավայրից արդյունահանվող հանքաքարի վերամշակման տարածաշրջանային կենտրոն:

«Պոլիմետալը» մտադիր է 2017թ. երկրորդ կեսին ավելացնել հարստացուցիչ ֆաբրիկայի բեռնվածությունը մինչև 600-650 հազ. տոննա տարեկան: Դա առաջին հերթին իրականացվելու է գործող ստորգետնյա հանքի արտադրողականության աճի, նոր սարքավորումների ձեռքբերման և Կապանի հանքավայրում լեռնային աշխատանքների վարման տեխնոլոգիայի փոփոխության ճանապարհով: 2016թ. ապրիլի 28-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում Կապանի ԼՀԿ-ում արդյունահանվել է 181 հազ. տոննա և ֆաբրիկայում վերամշակվել է 180 հազ. տոննա հանքաքար: Արտադրված խտանյութերը պարունակել են շուրջ 308կգ ոսկի, 6,2 տոննա արծաթ, 0,4 տոննա պղինձ և 2 հազ. տոննա ցինկ:

Ձեռնարկության աշխատողները

Ներկայում կոմբինատն ունի շուրջ 1150 աշխատող: «Պոլիմետալի» կողմից 2016թ. ապրիլին ձեռնարկությունը ձեռք բերելուց հետո անձնակազմը կրճատվել է ութ մարդով:

Ձեռնարկությունում այժմ աշխատում են 14 օտարերկրացի: Նրանք երկար տարիներ աշխատել են «Պոլիմետալում» և տարբեր տարածաշրջաններում: Կապան եկել են մասնագետներ

«Պոլիմետալի» ստորգետնյա լեռնային աշխատանքներ իրականացնող առաջատար ձեռնարկություններից, որտեղ նրանք եղել են լավագույնների շարքում: Բայց Կապանի նորացված ԼՀԿ-ն ստեղծելու է ձեռնարկության ամբողջ կոլեկտիվը: Եկած մասնագետները խմբի մի մասն են միայն, իսկ հիմքը և միջուկը ձեռնարկությունում երկար տարիներ աշխատած մարդիկ են:

Ընկերությունն այժմ փնտրում է բարձրագույն մասնագիտական կրթություն ունեցող նոր աշխատաողներ, մասնավորապես՝ հանքային ինժեներներ, լոգիստիկայի մասնագետներ, ֆինանսիստներ և այլն: Թափուր բոլոր աշխատատեղերի մասին կարելի է տեղեկանալ Կապան քաղաքի Դավիթ-Բեկ 2 հասցեով գտնվող տեղեկատվական կենտրոնից:

Աշխատողներն ընկերության հիմնական արժեքն են: «Պոլիմետալը» պատասխանատվությամբ է մոտենում աշխատողների առջև ստանձնած պարտավորությունների կատարմանն ու ժամանակին վճարում աշխատավարձը:

Մոտիվացված, նվիրված և նպատակասլաց աշխատողների թիմի ստեղծումը Ընկերության գործունեության գերակա ուղղություններից է: «Պոլիմետալը» բոլորի համար ստեղծում է աշխատանքի ընդունվելու, մասնագիտական զարգացման, ծառայողական առաջընթացի և մրցունակ աշխատավարձ ստանալու հավասար պայմաններ, ապահովում աշխատանքի ու կենցաղի պատշաճ պայմաններ:

Ընկերության բոլոր ձեռնարկությունները, աշխատանքային օրենսդրությանը համապատասխան, տրամադրում են սոցիալական երաշխիքներ, ինչպես նաև լրացուցիչ փոխհատուցումներ և արտոնություններ՝ ըստ ձեռնարկություններում կնքված կոլեկտիվ պայմանագրերի: «Պոլիմետալում» գործում են նաև աշխատողների և նրանց ընտանիքների սոցիալական աջակցության մի շարք նպատակային ծրագրեր: Լրացուցիչ երաշխիքները, փոխհատուցումներն ու արտոնությունները սահմանվում են նկատի առնելով ձեռնարկության աշխատողների պահանջները և գործատուի հնարավորությունները: Այժմ մենք շարունակում ենք ուսումնասիրել աշխատողների պահանջները և ձգտում ենք դրանք առավելագույնս ամրագրել սոցիալական գործընկերության պայմանագրերում:

Կոլեկտիվ պայմանագրի հիման վրա տրամադրվում են ավելի ընդլայնված սոցիալական երաշխիքներ, քան գործող օրենսդրությամբ նախատեսված նվազագույնն է, կյանքի տարբեր իրավիճակներում ցուցաբերվում է դրամական օգնություն:

«Պոլիմետալ» ընկերության սոցիալական պատասխանատվությունը

«Պոլիմետալը» սոցիալական պատասխանատու ընկերություն է, որը գիտակցում է իր երկարաժամկետ պարտավորությունները արտադրական գործունեության տարածքներում գտնվող բնակավայրերի բնակչության բարեկեցությունը տնտեսական, սոցիալական և բնապահպանական տեսանկյունից ապահովելու գործում:

Սոցիալական աջակցությունն իրականացվում է տեղական ինքնակառավարման մարմինների և ազգաբնակչության հետ համագործակցաբար մշակված երկարաժամկետ ծրագրերի հիման վրա:

Սոցիալական գործունեության սկզբունքներին և Կորպորատիվ վարքականոնին համապատասխան՝ «Պոլիմետալը» միշտ բաց է շահագրգիռ կողմերի ցանկացած դիմումի համար: Մեզ համար կարևոր է, որ տեղեկատվության, խորհրդատվությունների և հետադարձ կապի հասանելիություն ունենան հասարակության լայն շերտեր Ընկերության գործունեության բոլոր տարածքներում:

«Պոլիմետալում» գործում է հետադարձ կապի համակարգը դիմումների և առաջարկությունների հավաքագրման համար: Մենք բնակիչներին հրավիրում ենք բաց երկխոսության և նրանց հնարավորություն տալիս մեզ հետ կապ հաստատել էլեկտրոնային փոստով, հեռախոսով կամ հետադարձ կապի արկղերի միջոցով, կազմակերպում ենք հանդիպումներ ընկերության ներկայացուցիչների հետ

Սոցիալական աջակցությունն իրականացվում է բնակչության և տարածքների ինքնակառավարման մարմինների հետ միասին մշակված երկարաժամկետ ծրագրերի հիման վրա: 2016թ. վերջին երկու համաձայնագիր ստորագրվեց սոցիալ-տնտեսական համագործակցության ոլորտում՝ Կապան համայնքի հետ՝ 2017թ. կտրվածքով, 115 մլն ՀՀ դրամ ծավալով և Մեղրի համայնքի հետ՝ 2017-2018թթ. կտրվածքով, 36 մլն ՀՀ դրամ ծավալով:

2016թ. «Պոլիմետալն» ավելի քան 35 մլն ՀՀ դրամ է ներդրել սոցիալական աջակցության ծրագրերում և ցուցաբերել անհատական օգնություններ Սյունիքի մարզի տարբեր բնակիչների: Մասնավորապես՝ օժանդակություն է ցուցաբերվել մանկական ամառային ճամբարի, «Ուսանողական ամառ» միջոցառման կազմակերպմանը, Գեղանուշ գյուղի դպրոցին և Մեղրի համայնքին:

Բնապահպանություն

«Պոլիմետալի» առանցքային գերակայություններից մեկը շրջակա միջավայրի վրա տեխնոլոգիական գործընթացների ազդեցության նվազեցումն է: Ընկերությունը մշտապես կատարելագործում է իր բնապահպանական քաղաքականությունը՝ բարձրացնելու համար բնապահպանական կառավարման արդյունավետությունը և մշտապես բարելավելու երկրաբանահետախուզական, լեռնային և վերամշակման աշխատանքների բնապահպանական բնութագրերը:

Ընկերությունում ներդրվել է բնապահպանական կառավարման համակարգ՝ ԲԿՀ, որը գործում է բոլոր ձեռնարկություններում և համապատասխանում է պետական ու միջազգային առաջավոր փորձի բոլոր չափանիշներին: Այն ուղղված է պաշարների և էներգիայի ռացիոնալ

օգտագործմանը, շրջակա միջավայրի աղտոտման կանխարգելմանը, ժամանակակից տեխնոլոգիաների և սարքավորումների օգտագործմանը, դրանցում աշխատողների ներգրավմանն ու շրջակա միջավայրի պահպանության նկատմամբ նրանց անձնական պատասխանատվության բարձրացմանը:

«Պոլիմետալի» բնապահպանական կառավարման համակարգն արտոնագրված է Bureau Veritas Certification-ի անկախ աուդիտորների կողմից և 2013թ. սկսված համապատասխանում է ISO 14001:2004 միջազգային չափորոշիչին, որը ԲԿՀ մշակման ու արդիականացման հիմնական պահանջները ներառող միջազգային չափորոշիչ է:

Ընկերության ձեռնարկություններում աշխատողների և բնակչության մասնակցությամբ կանոնավոր կերպով իրականացվում են նաև բնապահպանական միջոցառումներ՝ շաբաթօրյակներ, ծառատունկեր, բնապահպանական մրցույթներ և վիկտորինաներ, ինչպես նաև այլ միջոցառումներ, որոնք ուղղված են շրջակա միջավայրի նկատմամբ յուրաքանչյուրի անձնական պատասխանատվության բարձրացմանը: